# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

## *Ծննդյան 80-ամյակի առթիվ*

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մեսրոպ Մաշտոցի շքանշանակիր Վլադիմիր Բարխուդարյանի 80-ամյակը: Նա հետպատերազմյան տարիներին կրթություն ստացած եւ գիտության ասպարեզ մտած հայ գիտնականների սերնդի լավագույն ներկայացուցիչներից մեկն է, սերունդ, որ իր գիտական վաստակի, գիտակազմակերպչական եռանդուն գործունեության շնորհիվ լայն ճանաչում բերեց Հայաստանի գիտությանը: Ի դեպ այդ սերնդի շնորհիվ էր, որ 1960-ական թթ. հայագիտությունը, այդ թվում խորհրդահայ պատմագրությունը՝ անգամ քաղաքական կապանքների պայմաններում նոր բարձրության հասավ: Այդ տասնամյակների պատմաբանների ստեղծած դպրոցը կարողացավ լուծել հայոց պատմության մի շարք հայեցակարգային խնդիրներ, որոնք իրենց թարմությունը պահպանեցին ցայսօր: Այդ գիտնականների կոհորտայում իր որոշակի եւ արժանի տեղն ունի անվանի պատմաբան, գիտության ճանաչված կազմակերպիչ Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:

Նա ծնվել է Վրաստանի Մառնեուլի շրջանի Աղքյորփի գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Հաջողությամբ ավարտելով համալսարանը, նա 1950 թվականին ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Միջին դարերի պատմություն» մասնագիտությամբ: Նա ավելի քան կես դար անընդմեջ աշխատում է ՀՀ ԳԱԱ-ի համակարգում՝ այսօր էլ պահպանելով իր երիտասարդական առույգությունը եւ գիտնականին հատուկ թարմ միտքը:

Վ. Բարխուդարյանը պատմագիտական շրջանների ուշադրությունն իր վրա բեւեռեց իր «Ավատատիրական հողատիրությունը Հայաստանում 9-11-րդ դարերում» ատենախոսությամբ, որը նա հաջողությամբ պաշտպանեց 1954-ին: 1955 թվականից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ-ի կազմում գործող Հայաստանի պատմության թանգարանում: Սակայն երիտասարդ հետազոտողին հրապուրում էր գիտական աշխատանքը եւ նա 1958 թ. տեղափոխվել է պատմության ինստիտուտ եւ սկսել զբաղվել խորհրդային տարիներին բոլորովին չխրախուսվող հայ գաղթավայրերի պատմությամբ: Խորհրդային իրականության մեջ նա առաջին ռահվիրաներից է, որոնք՝ խորապես գիտակցելով հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության կարեւորությունը, դարձան այդ գործի սկզբնավորողները եւ իրենց ուսերի վրա վերցրեցին այդ բնագավառի հիմնախնդիրները լուծելու մեծ ծանրությունը: Երկարատեւ տքնաջան աշխատանքի շնորհիվ լույս աշխարհ եկավ Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմությանը նվիրված նրա երկհատորանոց բարձրարժեք մենագրությունը (1967, 1985): Ավելի ուշ այն վերամշակվեց եւ հրատարակվեց մեկ հատորով ռուսերեն, 1996-ին: Ավելորդ է ասել, որ երիտասարդ ուսումնասիրողին հաջողվել էր ոչ միայն հաղթահարել իր առջեւ ծառացած բոլոր դժվարությունները, այլեւ ընթերցողին մատուցել Նոր Նախիջեւանի հայկական գաղութի ամողջական պատմությունը: Փաստական հարուստ նյութերի հիման վրա խորը վերլուծությամբ տրվում է հիշյալ գաղթավայրի համակողմանի պատմությունը, նրա տեղն ու դերը XVII-XX դարերի հայ հասարակական քաղաքական եւ մշակութային կյանքում: Վ. Բարխուդարյանի նշված մենագրությունը պատմագիտական շրջաններին հավաստեց, որ նրանք գործ ունեն լայն ու խոր պատրաստվածությամբ պատմաբանի հետ:



Ինչպես եւ պետք էր սպասել, հեղինակը հետագայում անդրադարձավ նաեւ հայ գաղթավայրերի ընդհանուր պատմությանը: Նրա նախաձեռնությամբ եւ խմբագրությամբ հրատարակվեցին հայ գաղթավայրերին նվիրված հոդվածների երեք արժեքավոր ժողովածուներ՝ «Հայ հունգարական պատմական եւ մշակութային կապերի պատմությունից» (1983), «Հայ ազատագրական շարժումները եւ հայկական գաղթավայրերը» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմությունից» (1996): Հունգարիայի պատմագիտական շրջանները բարձր գնահատեցին հայ եւ հունգար մասնագետների կողմից ստեղծված ժողովածուները, եւ նա պարգեւատրվեց Հունգարիայի գիտությունների ակադեմիայի մեդալով:

Լայն է Վ. Բարխուդարյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Հատկապես նա իր աշխատություններում մեծ ուշադրություն է դարձրել հայ ռուսական, քաղաքական, տնտեսական, գիտական եւ մշակութային հարաբերությունների պատմության քննությանը: Պետք է ասել, որ հեղինակին մեծ ճանաչում բերեցին հանրապետական եւ միութենական գիտական հանդեսներում նրա հրատարակած մի շարք աշխատությունները՝ նվիրված հայ պատմագիտության խնդիրներին: Անտարակույս պատմագիտական մեծ արժեք են ներկայացնում իր ուսուցիչների՝ Աշոտ Հովհաննիսյանի, Աբգար Հովհաննիսյանի, Մկրտիչ Ներսիսյանի, Սուրեն Երեմյանի, ինչպես նաեւ հունգար հայագետ Էդմոնդ Շուտցի պատմագիտական գործունեությանը նվիրված նրա ծավալուն հոդվածները:

Նա ե՛ւ որպես հեղինակ, ե՛ւ խմբագիր, ե՛ւ աշխատանքները համակարգողներից մեկը գործուն մասնակցություն ունեցավ Պատմության ինստիտուտի կողմից ստեղծված մի այնպիսի ծանրակշիռ աշխատության, ինչպիսին է «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը, որը դարակազմիկ գործ էր եւ ընդգրկում էր հայ ժողովրդի պատմությունը վաղնջական ժամանակներից մինչեւ մեր օրերը: «Բազմահատորյակի» հատկապես 6-րդ հատորում, որտեղ շատ հիմնախնդիրներ համարձակ եւ նորովի էին վերլուծվում, գրաքննության խութերը հաղթահարվեցին՝ շնորհիվ Վ. Բարխուդարյանի թե՛ լայնախոհության եւ թե՛ կազմակերպական ճկունության:

Իր պատմագիտական գործունեության մեջ Վ. Բարխուդարյանը մշտապես հանդես է բերել թե՛ հաստատակամություն եւ թե՛ գիտական խիզախություն, սակայն նրա գործելակերպին երբեք հատուկ չի եղել ծայրահեղությունների գնալը:

Նա հավասարակշռված եւ միաժամանակ պատմագիտության առաջ ծառացած խնդիրները խորապես ընկալող, նրա զարկերակին հետեւող առաջատար մասնագետներից է: Տակավին 1962-ին գիտական քարտուղարի պաշտոնավարության ժամանակ հանդես եկավ («Լրաբեր»,1962, N 6) պատմության ինստիտուտի առանցքային ուսումնասիրություններն արժեքավորելու եւ պատմագիտության մեջ անհատի պաշտամունքի բացասական հետեւանքները հաղթահարելու ուղիները բացահայտելու հոդվածով: Տեղին է ասել, որ այն ժամանակվա գաղափարական մթնոլորտում պատմագիտության առաջընթացն արգելակող հանգամանքները հրապարակավ քննադատելն անհրաժեշտ, բայց եւ միաժամանակ առավել քան համարձակ քայլ էր:

Ճշմարտությանը սատար կանգնելու վճռականությամբ նա բազմիցս հոդվածներով հանդես եկավ Արցախյան շարժման շրջանում (1988) Սակայն, երբ խորհրդային կարգերի փլուզմամբ պայմանավորված՝ ամբողջատիրական հասարակարգի հախուռն քննադատության եւ ամեն ինչ մերժելու ոգեշունչ զգայական մթնոլորտում տարածում գտավ խիստ ժխտողական վերաբերմունք նաեւ խորհրդահայ պատմագրության նկատմամբ, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը հանդես եկավ «Պատմաբանասիրական հանդեսում» «Խորհրդահայ պատմագրության գնահատականի հարցի շուրջ» (1990, թիվ 4) հոդվածով՝ անդրադառնալով խորհրդային պատմագիտության թերություններին եւ բացթողումներին, որոնք տեղ էին գտել ամբողջատիրության 70 տարիների ընթացքում, այլեւ վեր հանելով միաժամանակ վերջինիս մեծ ձեռքբերումներն ու նվաճումները հայ պատմագիտության այլեւայլ բնագավառներում:

ՀՀ անկախության վերականգնումից, երբ բառիս իսկական իմաստով դասագրքերի սով էր առաջացել, երբ հայոց նոր եւ նորագույն պատմության առանցքային շատ հարցեր նոր լուսաբանությունների եւ մեկնաբանությունների կարիք ունեին Վ. Բարխուդարյանի գլխավորած հեղինակային խումբը ի զորու եղավ ցրտի եւ մթի պայմաններում՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, 1993-ին աշակերտներին մատուցել հայոց պատմության նոր դասագիրքը 5-8-րդ դասարանների համար: Վ. Բարխուդարյանը, թե որպես խմբագիր եւ հեղինակ, ինչպես նաեւ հեղինակային խմբի մյուս անդամները՝ լինելով հիրավի արծարծված հարցերի իսկական մասնագետներ, ոչ միայն աշակերտներին ներկայացրեցին բազմաթիվ հիմնախնդիրների հանրամատչելի շարադրանք, այլեւ նորովի մոտեցումներ ունեցան հատկապես նոր եւ նորագույն պատմության շատ ու շատ հիմնախնդիրների: Դասագիրքը հետագայում քանիցս վերահրատարակվեց եւ արժանացավ մրցանակի:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը գիտական աշխատանքը մշտապես զուգակցել է գիտակազմակերպչականի հետ: 1959-1963-ին վարել է պատմության ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, 1967-1990-ին եղել է տնօրենի գիտական աշխատանքների գծով տեղակալ, համատեղության կարգով երկար տարիներ գլխավորում է հայ գաղթավայրերի պատմության բաժինը: 1990-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, իսկ 2000-ին՝ նաեւ փոխնախագահ: 1986-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, իսկ 1994-ին՝ իսկական անդամ:

Վ. Բարխուդարյան նշանավոր գիտնականը գիտահետազոտական աշխատանքը զուգակցում է դասախոսական գործունեության հետ: Տասնամյակներ շարունակ նա դասախոսել է Երեւանի պետական համալսարանում, Վանաձորի մանկավարժական ինստիտուտում եւ այլուր՝ իր հարուստ գիտելիքները եւ խոր իմացությունը հաղորդելով ուսանողությանը: Էլ ավելի մեծ է նրա դերը երիտասարդ գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ: Մեծ թվով ատենախոսություններ պատրաստվել է նրա ղեկավարությամբ, իսկ նրա սաներն այսօր աշխատում են ոչ միայն պատմագիտության բնագավառում, այլեւ ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում:

Վ. Բարխուդարյանն իր ընդառաջող եւ գործունյա բնավորության շնորհիվ ակտիվ մասնակցություն է բերում հանրապետության գիտակրթական կյանքին: Լինելով ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, նա շուրջ տասը հեղինակավոր հաստատությունների եւ բուհերի գիտական խորհուրդների անդամ է: Տարիներ շարունակ եղել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահ, ԵՊՀ-ի պատմության եւ աստվածաբանության ֆակուլտետների պետական քննական հանձնաժողովների նախագահ:

Իր բազմազբաղ գործունեության մեջ Վ. Բարխուդարյանը կարողացել է ժամանակ գտնել եւ հասարակական բուռն գործունեություն ծավալել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Բարձրագույն հոգեւոր խորհրդում, որի անդամն է նա: Նրա ակտիվ հասարակական աշխատանքը եւ քաղաքացիական գործելակերպը աննկատ չմնաց: Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ բարձր գնահատելով նրա անբասիր գործունեությունը, Վ. Բարխուդարյանին պարգեւատրեց Սուրբ Սահակ եւ Մեսրոպ շքանշանով: Այսօր էլ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը լի է երիտասարդական ավյունով եւ գիտական զանազան ծրագրերով եւ մենք ցանկանում ենք նրան երկար տարիների կյանք, բեղուն գրիչ, նորանոր աշխատություններ ի փառս հայ ժողովրդի եւ հայագիտության:

*ՀՀ ԳԱԱ նախագահ*
**Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն* **Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ**